



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5348



ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԱՐԱԲԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

4927-5
9-93



2010

اعون ما طيوسيانك
مطبعة و مجلدخانه
درست اختيار و فروشگاه

100

2+

100

100

100

100

492.7-5

9-93

425 ևս

49-91

﴿ صرف جديد عربي ﴾


ՆՈՐ ՔԵՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԱԲԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Ի ՊԷՏՏՈ ՎԱՐԺԵԼՈՑ ԵՒ ԹԵՐԱՎԱՐԺԻՑ

Աւսաստօրեաց

ՌԵԹԷՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՆՇՈՒՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1892

Handwritten purple text in a vertical column: 09091, 1004, 16366

Գործոյս ամէն իրաւունքը հեղինակին
վերապահեալ է:

29786-Վ.հ.

2002

13412-58

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Օսմանեան լեզուի հմուտ ամէն ազգայնոց յայտնի է թէ, ո՛րք գլխաւորաբար Արաբ լեզուին մէջ կիրթ և փորձառու ըլլայ՝ նոյնչափ Օսմանեան լեզուի մէջ ալ յառաջադէմ և քաջափարժ կ'ըլլայ . հետեւաբար երբ ուսանող մը արաբ լեզուին տեղեկութիւն չունենայ՝ անհիմն և թերի կը մնայ Օսմանեան դըստութեան ուսումնս :

Ուստի հարկ անհրաժեշտ է Արաբ լեզուն ըստ բաւականին յառաջ տանիլ կանոնաւոր եղանակաւ , և օր ըստ օրէ իւր մտքին մէջ բեղմնաւորելով, նորա արգասիք լիուլի վայելել :

Արդ՝ ի պէտս մերազնէից, ցարդ չեմ տեսած հայ լեզուով բացատրուած կանոնական պարունակութեամբ արաբ լեզուի քերականութիւն մը՝ որ դիւրէ այս լեզուին ուսումնս , և առաջնորդէ անոր դժուարիմաց խրթնութիւններն լուծելու . վասն զի անիմանալի երեցած իսկական դժուարութիւնք մեծաւ մասամբ արաբ լեզուին անհմտութենէն կը ծագին :

Այս համոզմամբ հարկ դատեցի Արաբերէնի յատուկ քերականութիւն մը պատրաստել , զետեղելով անդ բառական և թէ հատուածական խօսից օրինական կանոնները՝ ոչ այնչափ ընդարձակ և ոչ համառօտ . և այս միայն այնու նպատակաւ թէ՛ մի գուցէ ուսանողք խրտչին և յուսաբեկին այս լեզուին լայնածաւալ ծովու նման ունեցած անհուն և անսահման տարածութենէն :

Այսու հանդերձ արաբացի լեզուով աւանդեալ հին դրութիւնք խիստ յարգի է թէ կանոնաց ճշդութեանը և թէ մանրազնին քննադատութեան մասին . և այն դրութիւնն է միակ խարխիս լեզուն հիմնովին ուսանելու եւ նորա ամենանուրբ գաղտնեացը թափանցելու . սակայն և այնպէս այս աշխատութեամբս մասնաւոր խնամք տարած եմ՝ նոր իմն եղանակաւ ուսուցման . որպէս զի ուսանողք ի սկզբան անդ չպաշարուին և չը վարանին կանոնական կարգ մը խրթնութիւններով . և թէ ընդերկար ժամանակ չպարտապին : Ուստի աշխատած եմ հարթել այն դժուարութիւնք՝ որ ուսուցչաց այլ ընդ այլոյ բացատրութեամբ իբր անել բաւիղ մը կը ներկայանան . ուստի զայն ուսանելէ խըրտչելով իսպառ կը վհատին , և ի սկզբան անդ բարձի թողի ընել կը հարկադրին . ինչպէս շատերը ակն յանդիման կ'երեւին այս սքանչ

չելի եւ մինչև իսկ անզուգական լեզուն սովորելէ զուրկ եւ սնավաստակ :

Մանաւանգ արդեան դպրոցական մանկտին այլևայլ լեզուաց և ուսանելեաց պարսպելնուն համար՝ սուղ ժամանակինն չներէր երկարածիք ժամովածառ ըլլան այս լեզուն հետամտելու և ուրիշ ո՛ր և է արար քերականութեան դիմելու :

Վասն որոյ կը փափաքէի բաւական ժամանակէ ի վեր իմ բազմամեայ փորձառութեամբ այսպիսի գործ մը տպագրելով ծառայութիւն մը մատուցանել սիրելի ազգայնոցս, սիրայորդոր խրատուսանօք և օժանդակութեամբ բարեյիշատակ Ալա Մեղքոն Գալֆայի որդի Պօղոս էֆէնտի Գալֆասանի, և ըստ ամենայնի կարեւոր եւ պիտանի գիտելօք եւ հեշտին եւ դիւրիմաց ոճով Բաւադիրութիւնն ութ մասանց բաժնել, ի վայել մերազնեայ ուսումնասիրաց և ի դիւրութիւն հայ մանկուոյն :

Քերականութիւնս երեք մասանց բաժանեալ լինելով ,


- Ա. մասն կըկազմեն ութ մասունք բանի الصرف
- Բ. » » Համաձայնութիւն النحو
- Գ. » » Շարադրութիւն المحررات العربية

Այս առաջին մասն է զոր առ այժմ ի լոյս կ'ընծայեմ և քաջայայտ եմ որ, միւս մասունքն ևս իրենց նպատակին կը հասնին :

ՌԵԹԷՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

يَلُوحُ الحَطُّ فِي القَرَطاسِ دَهْرًا
وَكاتِبُهُ رَمِيمٌ فِي التُّرابِ

Գիրը կը փայլի քարտիսին վրայ շատ դարեր ,
բայց անոր գրողը հողին մէջ փտեալ կմտիք եղած է :



ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԱԲԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Յաղագս Արաբերէն ասոյց առհասարակ

ԳՐԵՐՈՒՆ ԶԵՒԵՐԸ

ԱՆՈՒՆՆԵՐԸ

ԶՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ا	الف էլիֆ	...
ب	باء պա	պ
ت	تاء թա	թ
ث	ثاء սա	ս { բուն ձայնը լեզուի ծայրով թաին և սաին մէջտեղը պէտք է հնչել.
ج	جيم ճիյմ	ճ
ح	حاء հա	հ
خ	حاء խա	խ
د	دال տալ	տ
ذ	ذال զալ	զ { բուն ձայնը լեզուին ծայրովը տալին ու զալին մէջտեղը պէտք է հնչել.
ر	راء ուա կամ րա	ու . ր
ز	زاء զա	զ
س	سين սիյն	ս
ش	شين շիյն	շ
ص	صاد սաստ	ս խիստ
ض	ضاد տատ	տ թանձրահնչիւն
ط	طا դա	դ խիստ

ԳՐԵՐՈՒՆ ՁԵՒԵՐԸ

ԱՆՈՒՆՆԵՐԸ

ՋՐՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ظ	ظا զա	ղ խիստ
ع	عين այն	...
غ	غين զայն	ղ
ف	فاء ֆա	ֆ
ق	قاف գաֆ	գ
ك	كاف քեաֆ	ք
ل	لام լեամհամլամ	լ
م	ميم միյմ	մ
ن	نون նուն	ն
و	واو վաւ	վ
ه	هاء հա	հ նօսր
ی	ياء եա	ե . յ

1. Պարսկերէն և Տաճկերէնի համար վեց գիր աւելցած է. հոս տեղ իբր ժանօթութիւն իմաց կը տրուի, որոնք թէպէտև մեր նպատակին չեն ծառայեր, ինչպէս՝

پ փէ,	կարգաւ	ب էն ետքը կը դրուի
چ չիյն,	»	ح » » » »
ژ ժէ,	»	ز » » » »
ک կեաֆ,	»	ك քեաֆէն » »
ک քեաֆ ռնգային »		کեաֆէն » »
ک յաֆ կամ եաֆ »		کեաֆէն » »

2. Արաբացոց գրերը ինչպէս որ կ'երևի սխնակին մէջ քսանուութը հատ են որոնցմէ տասնութեց հատը այ-

սինքն ى و ه ن م ل ك ا ح د ر س ص ط ع ك ل م ن و ه ى ۱۶
 մատական ձեւեր են. իսկ մնացեալ տասներկու հատը ո-
 րոնք են ق ف غ خ ذ ز ش ض ظ غ ف ق ۱۷
 միջոցաւ աւելցած են. որոնցմէ ب և ن ձեւերը առանց
 կէտի նշանագիր չեն. նմանապէս ۱ և ق գիրերն ալ ա-
 ռանց կէտի աննշանակ են. ى գիրը եթէ իւր ձեւովը
 գրուի՝ տակը կէտ դնելու հարկ չկայ. իսկ եթէ բառին
 սկիզբը կամ մէջը գրուի՝ միւս կէտաւոր գրերէն որոշելու
 համար, պէտք է կէտերը գրուիլ:

ԱՆՁԱՏԱԿԱՆ ԵՒ ԿՅԱԿԱՆ ԳՐԵՐ

أَحْرُوفُ الْمُنْفَصِلَةِ وَالْمُتَّصِلَةِ

3. ا د ذ ر ز و այս վեց գրերը իրենց յաջորդող
 գրերուն չեն կցուիր ինչ. رضاء հաճութիւն, կամք. مركز
 կեդրոն. բառերուն ۱۱ գրերը. ուստի ասոնց الحروف المنفصلة
 կ'սուի, անջատական գիրերը ըսել է: իսկ մնացեալները կը
 կցուին. ինչ. դարձեալ رضاء բառին رضاد և مركز բառին
 ميم ۱ և كاف ۱. ասոնց الحروف المتصلة կ'սուի, կցական գր-
 րերը ըսել է:

4. 28 գրերէն 14 ին أَحْرُوفُ الشَّمْسِيَّةِ կ'սուի, որոնք են.
 ن ت ث د ذ ر ز س ش ص ض ظ ل ن գրերը. ասոնցմով
 սկսուած բառերուն վրայ եթէ ال որոշիչ յօդը գրուի,
 եթէ ինքնին սկսուած է՝ միայն լամը չ'հնչուիր, եւ իւր
 տեղը բառին սկզբնատառը երկու անգամ կը հնչուի. ինչ.
 الشَّمْسُ արեգակն. իսկ եթէ իրմէ յառաջ գիր կամ բառ

ضياء الشمس و الشمس . Ինչ .
գտնուի՝ երկուքն ալ չհնչուիր .

5. Միւս մնացած Աւին ալ ԱՂՐՈՒՖ ԱՂՄԵՐԻՅԷ կ'սուի, որոնք են . ى ه و م ك ق ف غ ع ح خ ع غ ف ق ك م و ه ى .
Բառերուն վրայ եթէ յիշեալ որոշիչ յօդը դրուի, եթէ ինքնին սկսուած է, երկուքն ալ կը հնչուի . Ինչ .
الْقَمَرُ Լուսին . Իսկ եթէ իրմէ յառաջ գիր կամ բառ գտնուի՝ միայն լեամը կը հնչուի, وَالْقَمَرُ . نُورُ الْقَمَرِ . Լոյս Լուսնի . شمس շինի վերաբերեալ գրեր, قمر գափի վերաբերեալ գրեր ըսել է :

6. ض գիրը արաբերէնի մէջ իր բուն ձայնը կուտայ . Իսկ Պարսկերէն և Թուրքերէնի մէջ շ ի պէս կը հնչուի :

Բառին կամ խօսքին վերջը գտնուած հոլովական և ուրիշ որ և է փոփոխութիւնները չհնչուիր, իբրև վերջ կամ կայանք مَوْقُوفٌ عَلَيْهِ 'նշանակելու համար . Բայց թէ իրօք և թէ զեղչմամբ երկու կերպն ալ ցուցուեցաւ տեղեկութիւն ստանալու համար :

حساب اجد

3. 28 գրերը Եփրայական շարքով եթէ դրուի՝ ուղղակի թուական գրերուն կարգը յայտնի կըլլայ, որոնց հրսապի էպփէա կ'սուի :

Ահաւասիկ Եփրայական այբբենարանին շարքը . Ինչ .

اجد هوز حطى كين سعقص قرشت ثخذ ضظع
այբբէն էպփէա հուգդի քելէմէն սափաս արեղէթ սափազ սապիդի

Միւսուոր	ط	ح	ز	و	ه	د	ج	ب	ا
	9	8	7	6	5	4	3	2	1

Տասնաւոր	ص	ف	ع	س	ن	م	ل	ك	ى
	90	80	70	60	50	40	30	20	10
Հարիւրաւոր	ظ	ض	ذ	خ	ث	ت	ش	ر	ق
	900	800	700	600	500	400	300	200	100
Հազարաւոր	غ								
	1000								

Աստուք շատ տեղ կը գործածուին մանաւանդ այնպիսի դէպքերու մէջ՝ որոնց ժամանակագրութիւնը կամ յիշատակութիւնը պահել հարկ կ'ըլլայ. ոտանաւոր կամ արձակ խօսքերով թուականը կիմացընեն առանց թուանշանի կարօտութեան: (Տես գրքիս յաւելուածը)

ՁԱՅՆԱՒՈՐԻ ՆՇԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

8. Ձայնաւոր նշաններն 3 են. որոնց կ'սուի **أَلْحَرَكَاتُ الثَّلَاثُ** **أَلْحَرَكَاتُ** **أَلْ** **كَا** **تُ** **ثَلَاثُ**. Ա. ֆէրհան՝ գծին վրայի կոր գիծն է: Բ. ֆերէն՝ գծին տակի կոր գիծն է: Գ. ֆուֆէն կամ շաֆէն՝ գծին վրայի փոքր վազի ձև ունեցող նշանն է: Այս նշանները ներգործութեամբ կամ զօրութեամբ գրերուն վրայ կամ ներքեւը գրուելով, ձայնաւոր գրերու պաշտօնը կը վարեն:

9. Եթէ յիշեալ նշանները այս **ح** **خ** **ص** **ض** **ط** **ظ** **ع** գրերուն վրան կամ տակը դրուին՝ **مُثَقَّلٌ** ծանր կը հնչուին. օրինակի ազգաւ:

(َ)	فتحه	ա .	ինչպէս	حَسَنٌ	قَدَرٌ
(ِ)	كسره	ը .	»	وَيَاقَتٌ	ضِيَاقَتٌ
(ُ)	ضمه	ու, օ, էօ	»	عُطَارِدٌ	عُضْفُورٌ

Վերջիններուն բուն արարական հնչումը միջինն է, որ է օ ձայնը:

10. Եթէ միւս մնացած 49 գրերուն դրուին ^{حُفِّفُ} թեթեւ կը հնչուին. զորօրինակ:

فتحه	է	.	ինչպէս	ذَلَالَتْ
كسره	ի	.	»	زَهَّائَتْ
ضمه	իւ	.	»	مُرْوَاتٌ

Ասոնցմէ միայն 10 գերը միջին ձայնն ունի:

التَّثْوِينَاتُ الثَّلَاثَةُ

11. Վերոյգրեալ ձայնաւորի նշաններուն կրկնութիւնն է, որոնք հոլովական բառերու ծայրը գրուելով նույի ձայն կուտան և բառին նշանակութիւնը անորոշ կը ձգեն. فتحه ին կրկնութիւնը բառին արմատին ծայրը էլիֆ մը աւելցնելով կ'ըլլայ, իբրև հայցական հոլով, ինչպէս:

شَخْصٌ պահելով, կամ պահելը. هُوَ հոգւոյ մը. حِفْظًا անձ մը. رَجُلًا այր ոք, զայր ոք. ثَعْلَبٌ ծառի մը. شَجَرًا աղուէս մը:

Եթէ ծայրը աւելորդ Ե օ գտնուի, էլիֆ աւելցրնելու հարկ չկայ. ինչ. عِنَايَةٌ. عَجَلَةٌ. مَوْقَاتًا ասոր Են արմատէն ըլլալուն համար رَجُلًا ի պէս կը գրուի ուղղագրութեան մէջ:

12. Զայնաւորի նշան ունեցող գրին ^{أَلْحَرْفُ الْمُتَحَرِّكُ} չունեցողին ^{أَلْحَرْفُ السَّاكِنُ} կ'սուի. ինչ. عَنَبٌ բառին առաջին ու երրորդ գիրերն իրենց վրայ ձայնաւորի նշաններ ունին. իսկ երկրորդն ու չորրորդը ձայնաւորի նշան չունին, այլ

անձայն մնալու նշանն ունին, ۰ որուն *عَلَامَةُ السُّكُونِ* կ'սուի:

13. Եթէ *و* և *ی* գիրերը իրենց բնական ձայներն ունենալովն, այսինքն ասոնց նախորդող գիրն *ا* էն յառաջ *و* և էն յառաջ *ی* *كسره* յառաջ *ضمه* և էն յառաջ *فتحة* ունենայ, ձայնաւորի նշանակութիւն կ'առնուն եւ անձայն մնալու նշանն ۰ չ'են ունենար. վասն զի այս դէպքիս մէջ *حُرُوفُ الْإِمْلَاءِ* կ'սուի. ասոնք ձայնաւոր նշաններու տեղ գործածուող գիրերը ըսել է. ինչպէս:

نَجِبٌ سَكُوتٌ قَضَا

— *اَللَّهُ* Գարշեւ, երկարել.

14. Այս նշանը էլիֆ գրին վրայ դրուելով ա' ի ձայն կուտայ. *آء* և *آء* նմանապէս *ممدوده* և *او ممدوده* եւ *آء* կ'սուի եթէ միջադաս և վերջադաս և *او* և *آء* գիրերը քարշելով կարգացունին. առաջնոյն օրինակ. ինչ. *دُخُولٌ أَخُو*, երկրորդին օրինակ. ինչ. *سیرت*, *وصی*. միջադաս և վերջադաս էլիֆները, որոնք իրենց բնական ձայնաւորին տակն են, հարկ չկայ ուրեմն վրանին — այս նշանը դնելու. ինչ. *ممدوده* չեն ըլլար. *آء* և *او* սկզբնատառ եղող *كَاتِبٌ* ^[*] *تُرْبِيَا* Պարզ ձայնաւորի նշաններուն եւ այս *و* գրին մէջ տեղը եղած տարբերութիւնն այն է որ, այս գիրերը քարշելով կը կարգացունին, և ձայնաւորի նշանները չքարշելով:

[*] Ասոնցմէ դուրս մնացած է, է, է- ձայններուն *همزه* հեմլէ կ'սուի. ինչ. *اثر* էսէր. *انسان* ինսան, *انسيت* իւն-իյ-էթ, *تأثير* թէէսիր, *ملياً* մէլլէ, *خطى* մուխ-թի միւմին:

— شِدَّة Մաստկութիւն , կրկնութիւն [*]

15. Այս նշանը էլիֆ և հեփէ գրերէն զատ ամէն գրի վրայ կը դրուի, եւ այն գիրը երկու անգամ կ'արտասանուի բացի սկզբնատառերէն . ինչպէս :

دَج մերժել , արգելել , չընդունել . حَدَد կամ حِدَّة սաստկութիւն , ազդումն , զայրոյթ . مَادَة կամ مَادَة նիւթ , տարր . مُصَوِّر պատկերհան , նկարիչ . مُقَدِّد կապեալ , արձանագրեալ .

ՅԱՂԱԳՍ ՄԱՍՆՑ ԲԱՆԻ

16. Մասունք բանին 8 են . Անուն , Դերանուն , Բայ , Դերբայ , Նախդիր , Մակբայ , Շաղկապ , Զայնարկութիւն :

Առջի և ըստ ինքեան յատուկ և անկախ նշանակութիւն ունին , և փոփոխական են . իսկ միւսները անոնց պարտ ու պատշաճ եղած զանազան պարագայները կը լեցընեն և անփոփոխ են :

ՓՈՓՈՒԱԿԱՆ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

Գ Լ ՈՒ Ի Ա .

ԱՆՈՒՆ الاسْمُ

17. Անունը իր մէջը ամբողջ կամ կատարեալ նշանակութիւն ունի , առանց ժամանակի , և մէկ անձ մը կամ իր

[*] Եթէ մի և նոյն տեսակ գիրերը քովէ քով կրկուքն ալ գրուին՝ دَجَد միւս քերէն կրկնեալ կ'սուի . ինչ . جَلِيح ճելպիպէ , պարեգօտ կամ սաւան հագցնել .

մը, կամ վերացեալ գաղարար մը կը յայտնէ . *ինչ . انسان*
մարդ . موسى Մովսէս . فرس ճի . رَجُل . այր ոք . حَجْر քար .
حقيقت . յոյս . آمل . թմրութիւն արբեցութեան . ثمار ծով . بحر
ճշմարտութիւն :

18. Անունը երկու տեսակ է, Յատուկ, Հասարակ :

Յատուկը այն է՝ որ ամէն ազգ կամ ամէն լեզու ծա-
նուցեալ անձի մը կամ իրի մը յատկացած մի և նոյն բառը
կը գործածեն, միօրինակ արտասանութեամբ, կամ երբեմն
տառադարձութեամբ . *ինչ . لقمان Լոգման . سلمان Սէլման .*
يعقوب Յակոբ . سليمان Սիւլէյման կամ Սողղմոն . يوسف Եու-
սիւֆ կամ ճիշդը Յուսիւֆ Յովսէփ . استانبول Կ . Պօլիս . نيل
Նիլ Նեղոս :

19. Յատուկ անունը 2-3 բառերով ալ կ'ըլլայ, *ինչպէս .*
آياصوفيه . قزطوپراق . ديكيلي طاش .
علم طاعى . ասոնք և ասոնց նմանները ամէ-
նուն ծանօթ են . ուստի ուրիշ բառ հնարելու և գործա-
ծելու հարկ չկայ, և արդէն իրենք որոշեալ ըլլանուն Հա-
մար արարեալնի մէջ վրանին որոշիչ . *ال .* չը դրուիր :

20. Հասարակ անունը այն է՝ որ ամէն ազգ կամ
Հասարակութիւն ըստ հաճոյից զատ զատ բառեր հնարած
կը հնչեն . *ինչ . جمل ուղտ . تَوْر եզն . شَجَر ծառ . قَمُذ ողնի .*
حَضْرَم اղոխ . سفرَجَل սերկէլ , և ասոնց վրայ ال . յօդը կը

և եթէ մէկ գրուին երկուք կարգացուն՝ *مشد* միւշէտէտ, սաստկացեալ կ'սուի .
ինչ . تكلم թէքէլլիւմ, խօսիլ . և եթէ երկուք գրուին երեք կարգացուն . *ինչ .*
تر թէրէտտիւտ երկբայիլ, կասկածել, երթևեկել , թէ կրկնութիւն, եւ թէ
սաստկութիւն երկուքն ալ իր մէջը կը պարունակէ :

գրուի . որոշն ու անորոշը , կամ մասնաւորն ու ընդհանու-
րը մէկ մէկէ տարբերելու համար :

ՈՐՈՇԻՉ ՅՅՊԻՆ ՎՐԱՅ

21. Որոշիչ յօդը չորս կերպ կը գործածուի , որոնց
կ'սուի . عَهْدٌ ذِهْنِي . عَهْدٌ خَارِجِي . اسْتِعْرَاقٌ . جِنْسٌ .

Ա. اسْتِعْرَاقٌ սեռօրէն . جِنْسٌ արանց սեռը
լաւագոյն է . քան զկանանց :

Բ. استعراق արամարաշխապէս . الانسان لا يخلوا من النسيان
մէն մի անհատ մնուացումէ զերծ չէ :

Գ. عهد خارجي խօսողին ու լսողին միջև որոշեալ անհատ
մը կըրցուցնէ , նախապէս յիշուած . جاءني رجلٌ فأكرمتُ الرجلَ .
ինձ մարդ մը եկաւ եւ ես նոյն մարդը պատուեցի . կամ
اشتريتُ فرساً ثمَّ بعْتُ الفرسَ Ի մը գնեցի , յետոյ այն ձին վաճառեցի :

Դ. عهد ذهني խօսողին մտքին միայն յայտնի , լսողին ոչ .
أَدْخُلُ السُّوقَ وَأَشْتَرِي اللَّحْمَ (անձ մը իր սպասաւորին կըսէ) վաճա-
ռանոցը մտիր միտը գնէ :

22. Արարեբէն անուանց բաղկացութիւնը երկերկու
գրերէն սկսեալ մինչև հինգը կ'ելլէ . ինչ .

اخ . որդի . بِن . բերան . فَم . Ի . يد [°] երկագիր ثنائي
եղբայր . اب հայր .

امر հրաման . فلك երկին . حطب փայտ . ثلاثي
գործ , իր .

[*] Բայց առ նուազն 3 գրով պիտի ըլլայ արմատական բառերը . ուստի
այսպիսիքը և ուրիշ ասոնց նմաններն արտաքոյ կանոնի զարտուղելով մէյուկ
գրերին կ'որոնցուցած են . ید բառին բուն կազմութիւնը առանց յայտաւելու
է . بنو- بن . فم- فم . حطب- حطب .

رباعی Գառազիր . عسکر զօրք, ժողովորդ . درهم չափ կշռոյ .
عبر բուրկէն .

خماسی Հնդազիր . سَجْنَل հայելի . عَقْنَل ընդարձակ ձոր .
աւազի կոյտ .

جَمْشِ Ժեր կին . جِرْدَاحل ձոր . մեծամարմին կամ
յաղթանթամ ուղտ . عُنْدَلِيب սոխակ . عُنْكَبُوت մամուկ . աս-
տնք վեց գրով են . բայց ین և واو ը եկամուտ ըլ-
լալուն համար դարձեալ հընգազիր կը համարուին, և հըն-
գազիրներուն կարգը կը դասուին :

Յ Օ Դ Ո Ի Ա Յ Ա .

23. Անունները կամ նախատիպ են կամ ածանցական
Ածանցականը կամ նախատիպ անունէ կը ծագի . ինչպէս .
اسد առիւծ . مَأْسَد ատղի բազմութեան առիւծուց .

جره կայծ . جَمْشِ — جَمْشِ բուրվառ , խնկանոց .

ملح աղ . مَلْح արահանգ :

կամ բայարմատէ . ինչպէս .

طَبِخ եփել . مَطْبُخ խոհանոց . مَطْبُخ սան .

سَفَارَت ակն . مَكْسَه ակն . مَسْفَره ակն . كَنَس ակն .

فَتْح բանալ . مَفْتاح կամ مَفْتَح բանալի .

قَوْل խօսք . مَقُول քաղցրախօս կամ քաղցրալեզու .

عَجْن զանգել , մակարդել . مَعْجُون عَجِين խառնուած , խիւս .

دَرَس անհետանալ . دَارَس ակն .

دَرَس ընթեռնուլ . مدرسه ատղի ընթերցանութեան .

مَدَحَ զենուլ . مَدَحَ սպանդանոց . مَدَحَ դանակ .
فَضَلَ զատել բաժնել . مَفْضَلٌ յօդ , յօդուած :

24. Եռագիր արմատականները 10 ձև ունին. զորո .

Ձև	Օրինակ	
فَعَلَ	نَحَلَ	մեղու .
فَعَلَ	حَمَلَ	բեռն .
فَعِلَ	أَبَلَ	ուղտ (հաւաքական) .
فُعِلَ	قَفَلَ	փական .
فُعِلَ	عَنَقَ	սպարանոց .
قَعَلَ	قَدِمَ	ուտք .
فَعِلَ	كَبَدَ	թոք .
فَعَلَ	رَجَلَ	այր մարդ .
فَعَلَ	عَنَبَ	խաղող .
فُعَلَ	صَرَدَ	թուչուն մը .

25. Քառագիրները 6 ձև ունին :

Ձև	Օրինակ	
فَعَّلَ	جَعَفَرَ	նապաստակ , փոքր և մեծ դեռ .
فَعَّلَ	دَمَقَسَ	մետաքս .
فُعَّلَ	عَصَفَرَ	տեսակ մը ներկ և տունկը մը անուն .
فُعَّلَ	دَرَهَمَ	չափ կշռոյ .
فُعِّلَ	قَرَمَزَ	կարմիր ներկ .
فُعِّلَ	غَلِيطَ	ստուար իր .

26. Հնգագիրները 4 ձև ունին :



Ձեւ	Օրինակ	
فَقَلِّ	سمندل	կամ պարսկերէն سمندر
فِقَالِلْ	قرطعب	լաթի կտոր, սակաւ իր.
فُقَالِلْ	قدعمل	վիթխարի ուղտ.
فَقَالِلْ	ججرمش	ծեր կին, խիստ պառաւ.

Յ Օ Կ Ո Ւ Ա Ն Թ Բ.

Յարգազ սեռին اَلْكَيْفِيَّتْ

27. Անունները արական և իգական սեռի տակ են . առջինին مُدَكَّرٌ, երկրորդին مُؤَنَّثٌ կ'սուի, ինչ .

28. رَجُلٌ այր. أَبٌ հայր. أَخٌ եղբայր. جَمَلٌ արու ուղտ: Իգական اِمْرَاَةٌ կին . اُمٌّ մայր . اُخْتٌ քոյր . نَاقَهٌ մատակ ուղտ:

29. Իգական անունները երեք տեսակ են, ինչպէս .

مؤنث حقيقي Բուն իգական

لفظي » առմամբ կամ կաղմութեամբ իգական

سماوي » պիտակ իգական :

30. Ա. Բուն իգականները միշտ իգական և կամ որ և է էգ կենդանեաց սեռին կ'աւանանին, ինչպէս .

زَيْنَبٌ نسيمة عايشة كَبُوهٌ էգ առիւծ . نَعِجَهٌ էգ ոչխար . دُجَاچَهٌ մարի , հաւ . شَاهِدَهٌ վկայուհի . كَاتِبَهٌ էգ նստար [*]

[*] Հասարակ բառերէ ծագեալ իգական անունները իրենց դեմը միշտ ի կենդանեաց արական մը պիտի ունենան . مذكر من الحيوان . մանազաթ մա պի իգայիչի միւղէքքերին մինել հայվան . զրօր . كاتب արու նստար . نسيمة էգ նստար . جده ճէտտ հաւ . امه մամիկ , մծ մայր . ثور սէվր եղն . ناقة կով . ուստի կաղմութեամբ արական և նշանակութեամբ իգական եղող բառերուն ծայրը իգականի մասնիկ աւելցնելու հարկ չկայ . مرضع միւրտը կամ միւրող ստնտու . حامل համիլ ելձէ յղի նշանակէ . طامث թամիս սպահար . كاعب քեարպ գեռարոյս աղջիկ :

13912-08
(16360)

Եթէ այս երկու վերջիններուն ծայրէն **تَاءُ التَّائِيْتِ** իգականութեան Բէն կամ որնոյն է **هَاءُ رَسْمِيَّةٌ** անձայն օ հէն վերջուի **كاتب** արու նօտար . **شاهد** վկայ կըլլայ :

31. Առմամբ իգականները մէկ մը ծայրերնին **تاء التَّائِيْتِ** կամ **هَاءُ رَسْمِيَّةٌ** կամ **تَاءُ مَوْقُوفَةٌ** կայանք կամ հանդիստ առած օ կունենան . (խօսքը կայանք գտած կամ լրացած ատենը Բէն չհնչուիր) , ինչ . **عِبَارَةٌ** . **قَرِيحَةٌ** . **دَفْعَةٌ** . **قَلْعَةٌ** [*] . **قَلَّةٌ** . բայց թէ որ ընդմիջէ ուրիշ մասնկան յաւելմամբ՝ այսինքն երկուական և յլն մասնկամբ՝ Բէյերուն ձայնը միշտ կը հնչուին . (Տե՛ս 43 թուոյն շարունակութիւնը) :

Նաևս **تَاءُ طَوِيْلَةٌ** [**] ըսուած երկայն տ ով ալ կը գրուի , և ծայրը աւելորդ **تَاءُ مُدَوَّرَةٌ** ըսուած բոլորչի օ ունեցող հասարակ և վերացեալ անուն կամ անորիշ դերբայ կան՝ բոլորն ալ այս կարգի իգականներն են , ինչ . **إِفَاقَتْ** ապաքինութիւն . **إِحَارَتْ** հրաման տալ , յարմար դառուել . **إِقَالَةٌ** առուտուրը եղծանել , դաշինքը ցրել . **سَعَادَةٌ** երջանկութիւն , բարօրութիւն . **حُفْرَةٌ** փոս , խոր . **سُخَّةٌ** օրինակ . մէկ մ'ալ արմատին վերջը եւոյի կամ իւր բնական ձևն ունեցող ելե՞ մը աւելցնելով , **أَفْ مَقْصُورَةٌ** կարճ ելե՞ կ'սուի :

[*] Հնչումը հօի ձայն հանողին **هَاءُ الْمَقْضُوفَةِ** . Եի կամ ոի ձայն հանողին , և այս վերջինը միայն բառին վերջը կը գրուի :

[**] Արբաբցիք բայերուն իգական կամ երկրորդ դէմ շինող կամ արմատէն եղած երկայն Բէյերուն հետ չշփոթելու համար անուններուն և անորիշ դերբայներուն Բէյերը միշտ կ'ըլ կ'գրեն . իսկ թուրքերէնի մէջ թէ մի և նոյն բառը ինչ . **عِبَارَةٌ** . **عِبَارَةٌ** . **حَمَايَةٌ** . **حَمَايَةٌ** . **حَكَايَةٌ** . **حَكَايَةٌ** , և թէ զատ զատ . ինչ . **فَوَادَةٌ** . **إِدَارَةٌ** . **حَكْمَةٌ** . երկայն Բէյոյլ ալ կամ անձայն հէյոյլ ալ կը գրուի . ինչ . **عَمَامَةٌ** . ուստի ասոնց և ընթացակից ընկերացը միակ առաջնորդը սովորութիւնն է մէկ մ'ալ մակրայի դարձած բառերը կ'ըլ Բէյոյլ վրանին **تَوِينٌ** Բէնվէն կը գրուի **عِنَايَةٌ** ի շնորհս **مَكْفَاةٌ** ի վարձատրութիւն :

ինչպէս حَبْلِي دَعَوَى բառերուն պէս, և երկայն եւեթ
ինչպէս صَحْرًا حَمْرًا سَوَادًا կ'սուի, ինչ. سوداء և այլն օրինակ-
ներուն եւեթը բառին մէջն է ևւ բուն վերջին գիրը հեփե
եւեթն է. բայց թուրքերէնի մէջ բազմիցս նոյնը չնշուելուն
համար, յիշեալ الف ممدوده վերջ գիրը կը նկատուի :

حُرُوفُ الْهَجَاءِ Հեգելու գրերուն բոլորն ալ իգական են.
ինչպէս վերը հեգական գրերուն առջին դրուած ածա-
կաններէն յայտնի է. (Տե՛ս երես 14) :

32. Գ. Պիտակ իգականները ոչ նշանակութեամբ ի-
գական են և ոչ կազմութեամբ. այլ միայն սովորութեամբ
և գործածութեամբ. զորօր. شمس Արև. نار հուր և այլն .
կենդանեաց վրայ գտնուած զոյգ անդամները ընդհանրա-
պէս այս տեսակէն են. عين աչք. يد ձեռք .
قدم ոտք, և այլն :

ريح عاصفه մրրկայոյզ հողմ. دائر واسعة ընդարձակ տուն.
شمس مضيئة լուսատու Արեգակ. يد بيضاء սպիտակ ձեռք .

Հին դարերու մէջ եկած արաբացւոց երևելի գրա-
դէտներն այսպիսի բառերը, որ միայն հեղինակներէն
կիմացուի՝ իգական գործածեր են. մէկ մ'ալ որ ասանց
փոքրականները مضعرة իգականի մասնիկով կըլլայ . وَرْد
փոքրիկ տուն. عَيْنُهُ փոքրիկ ակն. شَمْسُهُ փոքր Արև այսինքն
լուսաւոր աստղ. կարելի է լեզուին քաջահմուտ անձինք
այսպիսի յայտնի կամ անյայտ պատճառները գտնելով իգա-
կան սեռ տուած ըլլան :

Յ Օ Դ Ո Ի Ա Ծ Գ.

Յաղագս թուոյն **الْكَمَيْتُ**

33. Թիւը երեք է **مُفْرَدٌ** եղական . **تَشْنِيَةٌ** երկուական .
جَمْعٌ Յողնական . եղականը մէկ կը ցուցնէ . երկուականը երկու . Յողնականը երկուքէն աւելի :

	Արական	Թ Ի Ի Ք	Իգական
եղական	سارق	մէկ գող	سارقة
երկուական	سارقان	երկու գողեր	سارقتان
Յողնական	سارقون	երեք կամ աւելի գողեր	سارقات
եղական	كتاب	մէկ գիրք	
երկուական	كتابين	երկու գիրքեր	
Յողնական	كُتُبٌ	երկուքէն աւելի գիրքեր	

34. ԾՆՕԹ . երկուականներն երեք կերպ գործածուած թիւն ունին :

Ա. Միւենոյն տեսակէ մէկ , մէկու նման նոյնասեռ իրեր կը ցուցնէ , ինչպէս :

شَجَرٌ ծառ . شَجَرَيْنِ երկու ծառեր . رَجُلٌ այր մարդ . رَجُلَيْنِ երկու այր մարդիկ . امْرَأَةٌ կին . امْرَأَاتٍ երկու կիներ :

Բ. երկու տարասեռ նշանակութիւն ունեցող , և մէկ մէկու հետ առնչականութիւն ցուցնող երկուականի արական ձևը՝ նախապատիւ կը համարուի իգականին նկատմամբ , ինչպէս :

أَبُو	հայր .	أَبَوَان	հայր և մայր .
والد	հայր .	والدَان	ծնողք .
مَشْرِق	Արևելք .	مَشْرِقَيْن	Արևելք և Արևմուտք .
قَرْن	Լուսին .	قَرَيْن	Լուսին և Արև .

نَالِهَا ۙ نُوْرًا . այս երկուական Գրգ . դէմ դերա-
նունով կիմացուի Ա . երկու այր . Բ . երկու կին . Գ . այր
և կին միատեղ . اِنْمَا ۙ դուք . նմանապէս երկու այր երկու
կին , և այր և կին միատեղ :

Գ . Շատ երկուական բառեր կան որոնք իրենց բնիկ
նշանակութիւնը թողլով , երկու մասնաւոր իրեր կը նշա-
նակեն . թէպէտ իրենց նախնական նշանակութիւնն ալ
կը շօշափեն , ինչպէս :

أَصْفَرَان ۙ փոքրագոյն .

أَصْفَرَان	أَصْفَرَيْن	լեղու և սիրտ .
اصفران	اصفرين	ոսկի և քրքում .
اقطعان	اقطعين	տուր և գրիչ .
ثقلان	ثقلين	մարդիկ և ոգիք .
جديدان	جديدين	ملوَان ۙ ملوِين Գիշեր և ցերեկ .
داران	دارين	աստի և անտի կենցաղ .
فرقدان	فرقدين	երկու լուսատու աստղեր Պրսկ . دو برادران
كريمْتان	كريمْتين	երկու աչք .
كعبتان	كعبتين	Թավլուին երկու զարը տապեղուլունք .
كليتَان	كليتَيْن	աւազան , լոգարան բաղանեաց .

- کلبان کلبین երկու շնիկ, այսինքն արջան .
- کونان کونین երկու աշխարհ, երկին և երկիր .
- نعلان نعلین զոյգ մը ոտքի աման . սանտալ, կօշիկ .
- نیران نیرین Արեւ և Լուսին, և այլք :

35. Յողնականներն երկու կերպ են . **کام جمع** կանոնաւոր յողնական, և **کام جمع مکسر** անկանոն յողնական :

36. Կանոնաւորը եթէ անձնական ըլլայ [°] եղականին վերջը **وَن** և **يَن** մասնիկները կ'աւելցուի . առանց իրեն նախնական կազմութիւնը փոխելու . որ եթէ յողնականի մասնիկը ծայրէն վերցնես՝ եղականն անփոփոխ կը մնայ . մէկ մ'ալ թէ անձնական և թէ իրական՝ բառերուն ծայրը **آت** մասնիկը կ'աւելցուի, որ ճիշդ մեր հայերէնի + յողնականակերտ գրին կը պատասխանէ, ինչպէս :

يَن որդի . **بَنُون**, **بَنِينَ** որդիք . **بَنَات** էգ որդիք .

ساجِد երկրպագու . **ساجِدُونَ**, **ساجِدِينَ** երկրպագուք ,
ساجِدَة էգ երկրպագու . **ساجِدَات** .

کال	կատարելութիւն	کالات
خصوص	առանձնութիւն և յատկութիւն	خصوصات
دَرَجَه	աստիճան վեր ելլելու	دَرَجَات
دَرَكه	աստիճան վար իջնելու	دَرَكَات

37. Անկանոնը այն է՝ որ իւր նախնական կազմութիւն-

[*] Մի քանի բառեր կը խտորին այս ընդհանուր կանոնէն . **سنه** տարի . **سنون**, **سنين** տարիներ . **ارض** երկիր, գետին . **ارضون**, **ارضين** երկիրներ, գետիններ . **ارضى جمع مكسر** . **ارضى جمع** աստիճան իրական բառեր են . բայց անձնականի յանգ առած են :

նը փոխելով, սկիզբը, մէջը, վերջը կերպ կերպ այլայլու-
թիւն կը կրէ, զորօրինակ :

եզական

Յոգնական

مثل	նման	أمثال
مُخْرَج	ելլելու տեղ .	مُخَارَج
ضَعِيف	տկար, անզօր, խեղճ	ضَعْفًا
سِقَاء	տիկ ջրոյ :	أَسْقِيَهُ

Ա.յս կերպ յոգնականներն 3 տեսակ կ'ըլլան. ինչ .

Ա. جَمْعٌ زَائِدٌ եզականին վրայ գիր աւելցնելով, ինչ .

فِكْرٌ մտածումն . افكارٌ մտածումներ .

Բ. جَمْعٌ مُساوٍ եզականը յոգնականին հետ հաւասար
գրով, ինչպէս : كَرِيمٌ պատուաւոր . اكرامٌ պատուաւորք :

Գ. جَمْعٌ ناقصٌ եզականէն պակաս գրով, ինչպէս .

طريقٌ ճանապարհ . طرقٌ ճանապարհք :

2 6 1 և .

فَعْلٌ 2 և ոյն յոգնականները فُعُولٌ فَعْلَانِ فَعَالٌ فَعْلَانِ կ'ըլլան .
1 2 3 4 5

1 جَسُورٌ կամ جِسْرٌ կամուրջ جَسُورٌ

2 شَكْلٌ ձև . اشكالٌ

3 سَجَلٌ գոյլ ջրհորոյ سَجَالٌ

4 جَارٌ գրացի جيرانٌ

5 اَرْضٌ գետին اراضى

38. ԾԱՆՅԹ . Մէկ ձևով զանազան նշանակութեամբ
եզական բառեր կան, որոնց յոգնականը տարբեր կերպով
կը գրուի . ինչպէս .

Եզական

امر } հրաման .
 փեճակ , գործ , իրողութիւն .

بيت } տուն , բնակարան .
 ոտանաւորի տուն .

خال } մօրեղբայր .
 պիտակ .

رسم } տուրք .
 ծէս .

رسم } մասն , բաժին .
 նետ .

Յոգնական

وامر } հրամաններ .
 امور } փեճակներ , գործեր .

بيوت } տուներ .
 آيات } ոտանաւորներ .

اخوال } մօր եղբայրներ .
 خيلان } պիտակներ .

رسوم } տուրքեր .
 مراسم } ծէսեր , սովորութիւններ .

اسهام } մասեր , բաժիններ .
 سهام } նետեր .

Ասոր հակառակ , մէկ ձևով զանազան նշանակութեամբ յոգնական բառեր կան , որոնց եզականը տարբեր կերպով կը գրուի , ինչպէս .

Եզական

بَلْبَلٌ } սոխակ .

بَلْبَلَةٌ } ծորակաւոր դորակ , գաւաթ .

بَلْبَلَةٌ } հոգ , ցաւ , տրամութիւն .

عَظْمٌ } ոսկր .

عَظِيمٌ } մեծ .

رَجُلٌ } այր մարդ .

راجلٌ } հեռիտ .

Յոգնական

بَلَابِلٌ

عِظَامٌ

رِجَالٌ

Եզականներուն նշանակութիւնը միևնոյն ձև յոգնականով իր մէջը կը պարունակէ այս ոտանաւոր խօսքը .

وَإِذَا الْبَلَابِلُ أَفْصَحَتْ بِلُغَاتِهَا فَنَقَّبِ الْبَلَابِلُ بِإِحْتِسَاءِ الْبَلَابِلِ

Երբոր սոխակները կ'երգեն քաղցրանուագ ներդաշնակութեամբ , ուրեմն դու մերժէ՛ , հեռացո՛ւր տրամութիւններդ գաւաթներէն ըմպելի խմելով :

Ձ Ե Ի Բ

39. **فُعُول** և **فِعَال** , **أَفْعَال** , **فِعَال** , **فُعُول** և **فِعَال** ձևերուն յոգնականներն են

بَكَرَ	կոյս , աղջիկ .	بَكَرَ	—	—
رَجَحَ	հողմ .	»	—	رياح
حَصَّنَ	պարխալ .	»	—	—

Ձ Ե Ի Գ

فِعَال և **فُعُول** , **أَفْعَال** , **فِعَال** , **فُعُول** և **فِعَال** ձևերուն յոգնականներն են

رَخِرَ	բարբ .	رَخِرَ	—	—
ثَلَّثَ	մէկ երրորդ .	»	—	—
عَنَّ	վիզ . պարանոց .	»	—	—
رَجَّحَ	— համաստեղութիւն .	»	—	بروج
رَجَّحَ	— սուին .	»	—	—

Ձ Ե Ի Կ

فِعَال և **أَفْعَال** , **فِعَال** , **فِعَال** , **فِعَال** ձևերուն յոգնականներն են

سَقَمَ	հիւանդութիւն .	سَقَمَ	—	اسقام
سَبَّبَ	չուան , պատճառ , առիթ .	»	—	اسباب
جَبَلَ	լեռան .	»	—	جبال
سَبَّحَ	կամ سُبَّحَ գաղան ,	»	—	—

Ձ Ե Ի Ե

فِعَال և **فِعَال** , **أَفْعَال** , **فِعَال** , **فِعَال** ձևերուն յոգնականն է

عَقَبَ	գարշապար .	عَقَبَ	—	اعقاب
عَنْبَ	խաղող :	»	—	اعناب
ضَاعَ	կող , անկիւն .	»	—	اضلاع

Ի Ո Տ Ո Ր Մ Ո Ի Ն Ք

* حسن	հասն , գեղեցկութիւն . յոգնական	حَسَنَ	—	مساكين
سَوَّاهُ	չարութիւն .	»	—	مساوى
بَيْنَ	եկեղեցի , բախտաւորութիւն .	»	—	ميامين
رَطَّبَ	թարմ արմաւ .	»	—	مربوب

** Չայս ձև ունի ملك (հրեշտակ) որոյ բուն ձևն էր ملك , յոգ . ملكك և ملائكت .

Ձ Ե Ի Ք Ձ, Է, Ը և Թ.

فَعْلَةٌ	ձեւոյն	յողնականն է	فِعَال	Եզ.	بلده	քաղաք	յգ.	بلاد
فِعَالَةٌ	«	«	فِعْلٌ	«	حرفة	արհեստ	«	حرف
فَعْلَةٌ	«	«	فُعْلٌ	«	تحفة	ընծայ	«	تحف
فَعْلَةٌ	«	«	فِعَالٌ	«	عجلة	կառք	«	عجال
					«	رقبة	«	رقاب

Մանօթութիւն . — Սոյն ձևերն երբեմն جمع سالم (կանոնաւոր յողնական) ալ կ'ընդունին, զորօրինակ .

مَعْتَةٌ	փայլ .	յգ.	مَعَات	عَتَبَةٌ	սեամք .	յգ.	عَتَبَات
قِطْعَةٌ	մասն .	»	قِطَعَات	كَلْبَةٌ	կիրծ .	«	عَقَبَات

Ձ Ե Ի Ք .

فُعْلٌ , أَفْعَالُهُ , فُعْلَانٌ և فِعَالٌ և فِعَالٌ , أَفْعَالُهُ և فُعْلَانٌ .

جواب	պատասխան .	յգ.	اجوبه	عَزَال	کَنْزِیْکِ .	յգ.	عَزَالَان
سلاح	զէն .	«	اسلحه				
غراب	աղուա .	«	اغربه	عَزَال	«	خِجَار	عَزَالَان
قَدَال	ծոծորակ .	«	قُدُل				
جِدَار	որմ .	«	جدر	عَزَال	«	حِجَاب	عَزَالَان
			جِدْرَان				
				عَزَال	«	شُجَاع	عَزَالَان

Ձ Ե Ի Ք և .

أَفْعَالٌ , أَفْعَالٌ , أَفْعَالُهُ , أَفْعَالُهُ և أَفْعَالٌ , أَفْعَالُهُ , أَفْعَالُهُ , أَفْعَالُهُ , أَفْعَالُهُ , أَفْعَالُهُ .

ՅՕԴՈՒԱԾ Գ.

40. Թէ արմատական բառերուն և թէ յաւելական չորս և կամ աւելի գիր ունեցող բառերուն յոգնականները կը կազմուին, ընդհանրապէս իրենց երկրորդ գրէն ետքը | աւելցնելով և երրորդ գրին کسره տալով, զորօրինակ .
 مبانى , مبنی . اکبر , أكبر . عساكر , عساكر .

Ծանօթութիւն. — Այս կանոնէն ի բաց առեալ են فَعَال , فَعَال , فَعُول և فَعِيل ձևերն որոց օրինակները ցուցուեցան ի վերև . (Ձևք Ժ, ԺԱ. և ԺԲ.) :

ՆԱԵՐՆԹԱՅ ՅՕԴՈՒԱԾԻՆ ՎՐԱՅ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝

41. Կանոն Ա. — Եթէ բառի մը մէջ եկամուտ ձայնաւոր գիր չգտնուի, յոգնականն անփոփոխ կը մնայ, ինչ .
 اکرم , اکرم . مكاتب , مكاتب . دفاتر , دفاتر . حصارم , حصارم (ազոխ),

Կանոն Բ. — Եթէ վերջընթեր գիրն է և կամ |, կը փոխուի ی ի յոգնականին մէջ, զորօրինակ :

قربان (զոհ) . يعافير . (եղնիկ) يعفور . مكاتيب , مكاتب . قرايين . براهين . (ազացոյց) برهان .

Եւ եթէ երրորդ գիրը | է, այս | էն անմիջապէս ետքը همزه կ'աւելնայ, ինչպէս .

علام , علامت . رسائل (տետր) , رساله :

Ծանօթութիւն. — Այս վերջընները կանոնաւոր յոգնական ալ ունին, ինչպէս .
 رسالات , رسالات :

Կանոն Գ. — Եթէ եզականը فاعل , فاعله և فاعل ձևերն ունենայ, ասոնց | ը կը փոխուի և ի, ինչպէս .

خاتم . دوائر , (շրջանակ) دائره . سواحل , (ծովեզր) ساحل
(գրոշմ) , خواتم :

Եւ եթէ բառին սկիզբը օ գտնուի , յողնականը
ձևը կ'առնու , ինչպէս . واسطه (միջնորդ) կ'ըլլայ ի յող-
նականին وسائط ոչ واسطه :

Կանոն Դ. — Եթէ եղական բառին վերջը գտնուի
անձայն օ կամ (աւելորդ) կլոր օ , կը թողուի , ինչպէս .
: مراحم , مرحة . محافظ , محفظه . ممالح , مملحه . محكم , محكمه

Եւ եթէ եղականը فعليه ձևն ունենայ , կ'ըլլայ .
: مشاييم , (սաղմնարոյն) مشيمه . سفارين , (նաւ) سفينه

Այսպէս են նաև չորսէ աւելի գիր ունեցող բառերը .
բայց չորս գիրը կը պահուի և աւելին կը թողուի , յողնա-
կանին կազմութեանը մէջ , ինչպէս .

عناكب (սարդ , մամուկ) عنكبوت . سفارج , (սերկիւն) سفرجيل
(Տես հատուած 25 և 26) : عنادل , (տոխակ) عنديلب

Սակայն երրորդ գիրը ձայնաւոր եղող բառերուն յող-
նականը կը խոտորի այս ձևէն , ինչպէս .

(ըն- هديه . عطايا (նուէր) عطيه . مطايا , (գրաստ) مطيه
: هداي , عطاي , مطاي րսելու փոխանակ . هدايا , (ծայ)

Յ Օ Դ Ո Ւ Ա Ն Ե Ե .

Անուանց հոլովներուն * վրայ

42. Երեք պարզ հոլով կայ . Ուղղական , Սեռական
և Հայցական :

Եթէ Ել որոշիչ յօդը գրուի հասարակ անուան վրայ ,

* اعراب որ հոլով և նաև քերականական լուծումն կը նշանակէ :

Ամ.
109.
Խաւարի .

կորոչէ և կամ կը մասնաւորէ այդ անունը՝ սրուն կ'ըսուի
المُعَرَّفُ بِاللَّامِ . (որոչեալ յօդիւ) : (Տե՛ս հատուած 21.) :

حَالُ الْمَذْكَرِ الْمُسْكَرِ

Հոլով անորոշ արականի

Եղական	Երկուական	Յոգնական
Ո. حَالُهُ الرَّفْعِ	բարե- مُحْسِنَانِ	բարե- مُحْسِنُونَ
Ս. حَالُهُ الْخَفْضِ	[գործ. مُحْسِنِينَ	[երկու مُحْسِنِينَ
Հ. حَالُهُ النَّصْبِ	مُحْسِنًا	مُحْسِنِينَ

حَالُ الْمَذْكَرِ الْمَعْرُوفِ

Հոլով որոչեալ արականի

Եղական	Երկուական	Յոգնական
Ո. أَحْسِنُ	المحسنانِ	المحسنونَ
Ս. المحسنِ	[المحسِنِينَ	[գործ. مُحْسِنِينَ
Հ. المحسنِ	المحسِنِينَ	المحسِنِينَ

حَالُ الْمُؤَنَّثِ الْمُسْكَرِ

Հոլով անորոշ իգականի

Եղական	Երկուական	Յոգնական
Ո. مُحْسِنَةٌ	محسِنَتَانِ	محسِنَاتُ
Ս. محسِنَةٍ	[գործ. محسِنَاتٍ	[երկու محسِنَاتٍ
Հ. محسِنَةٍ	محسِنَاتٍ	محسِنَاتٍ

حَالُ الْمُؤْتَى الْمَعْرَفِ

Հոլով որոշեալ իգականի

Եզական	Երկուական	Յոգնական
Ո. الْحُسْنَةُ	كَلِمَتَانِ	كَلِمَاتٌ
Ս. الحسنة	[գործ] المحسنين	[բարե-] المحسنات
Հ. الحسنة	[կոթին] المحسنين	[գործ.] المحسنات

Ինչպէս կը տեսնուի վերի օրինակներէն, ամէն երկուականի և կանոնաւոր յոգնական արականի եւ կամ իգականի սեռականն իր հայցականին կը նմանի:

43.

حَالُ الْمَذْكُورِ الْمُسَكَّرِ

Հոլով անորոշ արականի

Եզական	Երկուական	Յոգնական
Ո. رَجُلٌ	رَجُلَانِ	رِجَالٌ
Ս. رجل	رجلين	رجال
Հ. رجلاً	رجلين	رجالاً

حَالُ الْمَذْكُورِ الْمَعْرَفِ

Հոլով որոշեալ արականի

Եզական	Երկուական	Յոգնական
Ո. الرَّجُلُ	الرَّجُلَانِ	الرِّجَالُ
Ս. الرجل	الرجلين	الرجال
Հ. الرجل	الرجلين	الرجال

حَالُ الْمُؤَنَّثِ الْمُسَكَّرِ

Հոլով անորոշ իգականի

Եզական	Երկուական	Յոգնական
Ո. ^{۵۵} إِمْرَأَةٌ	إِمْرَأَتَانِ	إِمْرَأَاتٌ
կին (մի)	կանայք երկու	կանայք (ումանք)
Ս. ^{۵۶} إِمْرَأَةٌ	إِمْرَأَاتَيْنِ	إِمْرَأَاتٍ
կին(միոյ)	կանանց երկուց	կանանց (ումանց)
Հ. ^{۵۷} إِمْرَأَةٌ	إِمْرَأَاتَيْنِ	إِمْرَأَاتٍ
կին(մի)	կանայս երկուս	կանայս (ումանս)

حَالُ الْمُؤَنَّثِ الْمَعْرُوفِ

Հոլով որոշեալ իգականի

Եզական	Երկուական	Յոգնական
Ո. ^{۵۸} الْإِمْرَأَةُ	الْإِمْرَأَتَانِ	الْإِمْرَأَاتُ
կին(ն)	կանայքն երկուքին	կանայք(ն)
Ս. ^{۵۹} الْإِمْرَأَةُ	الْإِمْرَأَاتَيْنِ	الْإِمْرَأَاتِ
կին(ն)	կանանցն երկուցունց	կանանց(ն)
Հ. ^{۶۰} الْإِمْرَأَةُ	الْإِمْرَأَاتَيْنِ	الْإِمْرَأَاتِ
զկին(ն)	զկանայսն երկուսին	զկանայս(ն)

Իգական անուն.

Եզական	Երկուական	Յոգնական
Ո. ^{۶۱} نُسْخَةٌ	نُسْخَتَانِ	نُسْخٌ
օրինակ	օրինակք երկու	օրինակք
Ս. ^{۶۲} نُسْخَةٌ	نُسْخَتَيْنِ	نُسْخٍ
օրինակ	օրինակնց երկուց	օրինակնց
Հ. ^{۶۳} نُسْخَةٌ	نُسْخَتَيْنِ	نُسْخَةٍ
օրինակ	օրինակս երկուս	օրինակս

Ս.յս օրինակներէն կը տեսնուի որ անկանոն յոգնականաց հոլովական վերջաւորութիւններն եզակամաներուն հետ նոյն են . իսկ եթէ եզականին վերջը իգականի նշանն եղող աւելորդ օ գտնուի , սա ինքն կը հոլովի յեզականին և յերկուականին :

Իգական անուն.

Ո. سَفِينَةٌ	նաւ .	سَفِينَتَانِ	երկու նաւ .	سَفَايُنْ	կամ	سُفْن	նաւեր
Ս. سفينة		سَفِينَتَيْنِ		سَفَايِنَ			
Հ. سفينة		سَفِينَتَيْنِ		سَفَايِنَ			

Եզական Երկուական Յոգնական

Ո. وَكَيْلٌ	փոխանորդ- ուկլան	وَكِيلَانِ	երկու փոխանորդ- ուկլան	وَكَلَاءٌ	փոխանորդ- ք
Ս. وَكَيْلٍ		وَكَيْلَيْنِ		وَكَلَاءَ	
Հ. وَكَيْلًا		وَكَيْلَيْنِ		وَكَلَاءَ	

غير المنصرف քսուած, այսինքն فواعل , فعلاء և այլ ձևերն ունեցող հասարակ անուններուն սեռականը հայցականին կը հետևի երկուական ու յոգնականին մէջ, ինչպէս կը տեսնուի վերջին օրինակին մէջ :

44. Յատուկ անուններն ոչ որոշիչ յօդը կ'առնուն՝ վասն զի արդէն ինքնին որոշեալ բառեր են , և ոչ تنوين վասն զի չեն անորոշ բառեր , և ոչ ակ ڪسر , վասն զի սեռականնին հայցականնուն կը նմանի . ուստի غير المنصرف անուանք կը կոչուին , ինչպէս .

Ուղղ .	أَدْرِيسُ	Ենովք .
Սեռ .	أَدْرِيسٍ	Ենովքայ .
Հայց .	أَدْرِيسَ	Ղենովք .

Ս. յսպէս կը հօլովուին داود (Դաւիթ) , إبراهيم (Աբրահամ) , بَعْلَبَكَّ (Պաալէպէքք) , زُحَل (Երևակ) :

45. غير المنصرف *անուանց կարգէն են նաև*

Ա. أَفْعُلُ *ձևն ունեցող*

1) Բաղդատական ածականներն, ասոնց իգականներն և անկանոն յոգնականները, ինչպէս .

Արական

أَفْضَلُ (առաքինագոյն), أَكْبَرُ (մեծագոյն), اصْغَرُ (փոքրագոյն)

Իգական

فُضِّلَ « كَبْرَى » صَغْرَى «

Յոգնական

فُضِّلَ (առաքինագոյնք), كَبْرَى (մեծագոյնք), صَغْرَى (փոքրագոյնք)

2) Գոյն, գեղեցկութիւն կամ թերութիւն ցուցնող ածականները, ինչպէս . أَحْمَرُ (կարմիր), اصْفَرُ (դեղին) . — اَزْجَجُ (նրբայօն), ادَعَجَ (սևակն) . — اعْمَى (կոյր), اعْرَجَ (կաղ) :

3) Յատուկ անունները, ինչպէս . اطْحَلُ (լեառն յԱրաբիա) :

4) Հասարակ անունները, ինչպէս . أَجْدَلُ (իժ), أَفْعَى (ճուռակ) :

Բ. Տևողական վիճակ ցուցնող فَعْلَانُ ձևով ածականները, ինչպէս . سَكَرَانَ (արբեալ) . نَدْمَانَ (զղջացողն) . առջինին յոգնականը سُكَارَى և երկրորդինը نُدَامَى կ'ըլլայ :

Գ. فَعْلَاءٌ * ձևն ունեցող բառերը, ինչ . صَحْرَاءُ (դաշտ) :

Դ. Թուականաց միաւորներուն فُعْمَالٌ և مَفْعَلٌ ձևերը, ինչպէս . وَاحِدًا կամ وَاحِدٌ 'مَوْحِدٌ' ուր կը նշանակեն وَاحِدًا և وَاحِدًا . مَثَلًا կամ مَثَلٌ . երկու առ երկու . ثَلَاثًا կամ ثَلَاثٌ .

* Եւրոպայի և Ասիայի թեմայի ձևն և օգտագործուող (شئى) իգական ալ բառն ասիա պատճառաւ غير المنصرف ի կարգէն է :

երեք առ երեք . ربيع կամ ربيع . չորս առ չորս , և այլն :

فَعْلًا , أَفْعَالًا , مَفَاعِلٌ , أَفَاعِلٌ , أَفَاعِلٌ , أَفَاعِلٌ .
ձևերն ունեցող յոգնականները , ինչպէս . سفين (նա-
ւեր) , انعيم (վսեմադոյնք) , افاحم (վանորայք) , صوامع (արջառք , ոչխարք և սւղտք) , معايد (տաճարք) , معاشر (խում-
բեր) , مصابيح (կանթեղներ) , اولياء (սուրբք , տեարք) , وكلا (փոխանորդք) :

Այս վերջին յոգնական բառերուն եզականներն են .

سفينه , صومعه , افاحم , انعام (այս ալ յոգնական է . եզականը
وكيل , ولي , مصباح , معاشر , معبد , (نعم) կըլլայ) .

Երբոր եզական բառի մը نعم (ուղտ և ոչխար) յոգնա-
կան նուազականը 'انعام' և բաղմուտորականը 'انعيم' այս
վերջինիս جمع الجمع : Աւրիշ օրինակ . رهبان , كروناوور , رهاين رهبان :
: رهاين رهبان , كروناوور , رهاين رهبان . اظافر اظفار :

Իսկ եթէ յոգնականն միայն վերջնական ձև ունենայ՝
کلی جمع . مصابيح مصباح . مساجد مسجد .

جمع قلت چار باشد در زبان نحویان
أَفْعُلُ و أَفْعَالُ و فِعْلَةٌ هم بوزن أَفْعَلَةٍ

Մէկ քանի օրինակներ

Աւղղ .	أَفْضَلُ	صَحْرَاءُ	سَكْرَانُ
Սեռ .	أَفْضَلٌ	صَحْرَاءَ	سَكْرَانَ
Հայր .	أَفْضَلٍ	صَحْرَاءِ	سَكْرَانَ

46. Իսկ | եւ կամ | Ի | ձև առած սուղ ելիք ով

(الانف المقصورة) վերջաւորեալ յատուկ անուններն բոլորովին անփոփոխ կը մնան սապէս :

Ուզղ . زَكْرِيَا Զաքարիա مُوسَى Մովսէս عِيسَى Յիսուս
 Սեռ . زَكْرِيَا Զաքարեայ مُوسَى Մովսիս عِيسَى Յիսուսի
 Հայց . زَكْرِيَا զԶաքարիա مُوسَى զՄովսէս عِيسَى զՅիսուս

47. Սոյն յանգ ունեցող հասարակ անուններն ալ, թէ անորոշ և թէ որոշեալ, նոյն օրինակ անփոփոխ կը մնան . ինչպէս :

Ուզղ . قَتَا կամ قَتَى պատանի الْعَصَا գաւազանն
 Սեռ . قَتَا » قَتَى العصا
 Հայց . قَتَا » قَتَى العصا

Սյայէս են նաև دنیا , قَتَوَى , دعوى և այլն :

48. اَبُو (հայր) , اَخُو (եղբայր) , هُنُو (առականք) , حَمُو (աներ) , فُو (բերան) , և ذُو (տէր) բառերուն ուզղա կանին վերջնագիրն որ է و , կը փոխուի ی ի ի սեռակա նին և ا ի ի հայցականին , զորօրինակ .

Ուզղ . اَبُو* اَخُو هُنُو حَمُو فُو ذُو
 Սեռ . اَبُو اَخِي هُنِي حَمِي فِي ذِي
 Հայց . اَبَا اَخَا هَنَا حَمَا فَا ذَا

49. فاعل ձևն յով յանգեալ արմատական բառերը՝ անընդմիջ անորոշ եղական հոլովուած առեն , կը կորսնցնեն

* Բառի մը վերջին ձայնանշին փոփոխմամբ կատարուած հոլովն կ'ըսուի الاعراب بالحركات . Իսկ ձայնաւոր գրի փոփոխմամբ կատարուած հոլովն կ'ըսուի الاعراب بالحروف

իրենց ԿՆ յուզղականին և ի սեռականին միայն . իսկ ա-
մէն հոլովներուն մէջ միանգամայն՝ անորոշ յոգնական հո-
լովուած ատեն, ինչպէս. بَقِيَ (մշտնջենաւորութիւն, հաս-
տատ մնալ) որոյ فاعل ձևն է باقى , կը հոլովի այսպէս :

Եզական

Յոգնական

Ո.	باقٍ (կայուն) փոխանակ	باقٍ	باقُونَ փոխանակ	باقُونَ
Ս.	باقٍ	»	باقِينَ	»
Հ.	باقياً	»	باقِينَ	»

مَا الدُّنْيَا بِباقِيَةٍ لِأَحَدٍ աշխարհս մէկու մը մշտակաց չէ .

Նոյնպէս են նաև օ ով յանգեալ արմատական բա-
ռերն՝ որոնք սակայն فاعل ձևն առած ատեննին , Կ ի կը
փոխարկեն օ ը ըստ կանոնին զոր պիտի տեսնենք յետոյ .
ուստի خَالٍ (դատարկութիւն) որոյ فاعل ձևն է خالى , կը
հոլովի այսպէս :

Եզական

Յոգնական

Ո.	خالٍ (դատարկ) փոխանակ	خالٍ	خالُونَ փոխանակ	خالُونَ
Ս.	خالٍ	»	خالِينَ	»
Հ.	خالياً	»	خالِينَ	»

50. Իսկ ասոնց որոշեալն անփոփոխ կը մնայ թէ յե-
զականին և թէ ի յոգն . միայն եզ. հայց. Ի-Ն-Ն մը կառնու .

Եզական

Յոգնական

Ուզղ.	الباقى	الباقُونَ փոխանակ	الباقُونَ
Սեռ .	الباقى	»	الباقِينَ
Հայց .	الباقى	»	الباقِينَ

Այսպէս կը հոլովուին արմատին վերջին գիրը ւ կամ
 و ունեցող ներկայ ընդունելութիւնները (اسم فاعل) . այսինքն
 յիշեալ գրերուն նախընթաց գիրը ۰ كسره եղած ատեն, թէ
 եռագրական և թէ յաւելական կամ ածանցեալ ձևերը
 մի և նոյն կանոնին ենթակայ են, ինչպէս . كافي (բաւական) . شافي
 (առողջարար, բժիշկ) . فاني (կորստական, ապականացու) .
 باري (արարիչ) . غازی (պատերազմող) . عالی (բարձրացող) .
 داعی (աղօթող, հրահրող, դատախազ) . مُدعی (դատա-
 խազ, պահանջող) . مُتَكَبِّرٍ (խնդրող, ցանկացող) . مُتَرَجِّحٍ
 (յուսադիր) . مُسَلِّئٍ (մխիթարեալ) . և այլն :

Յ Օ Գ Ո Ւ Ա Ն Զ .

الإِضَافَةُ

ՅԱՂԱԳՄ ԿԱՊԱԿՅՈՒԹԵԱՆ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒԱՆ
 ԸՆԴ ԳՈՅԱԿԱՆԻ .

51. Անուն մը ուրիշ անուն մը հետ կապակցելով,
 որո՛ւ կամ ի՛նչ բանի վերաբերելը (اسناد) կը ցուցնէ : Ա-
 ուսջնոյն կ'ըսուի المضاف (յատկացեալ), եւ երկրորդին
 المضاف إليه (յատկացուցիչ) :

Արարական լեզուին մէջ յատկացեալը յատկացուցէն
 յառաջ կը դրուի, ինչպէս - غلامٌ زيد (Ժառայն Զէյտի) :

52. Կապակցութիւնը երեք կերպ է :

Ա. الإِضَافَةُ اللَّامِيَّةُ (ձական կապակցութիւն) այն է ,

յորում Լ նախդիրը կ'իմացուի զօրութեամբ յատկացուցին վրայ, ինչպէս .

مِنْ مَارِ دَاوُدَ ԵՄԱԻՆՔՆ արխինքն (սրինդն Դաւթի)

غَلَامٌ لِامْرَأَةٍ ԵՄԱՆ ԼԱՐԱՅԵ (ժառայ կնոջ)

حَضِيضٌ لِجَبَلٍ ԵՄԱՐԻՍՏԱՆ ԼԵՐԻՆ (ստորոտ լերին)

مِفْتَاحُ الْبَيْتِ ԵՄԱՆԱԽԻՆ ԼՄԱՆՆ (բանախի տանն)

مَنْعَةٌ لِلْعِلْمِ ԵՄԱՆԱԿԱՐՈՒԹԻՒՆ ԳԽՈՒԹԵԱՆ (օգտակարութիւն գիտութեան)

Բ. الاضافة البَيَانِيَّةُ (յայտնական կապակցութիւն) այն է յորում նախդիրը կ'իմացուի զօրութեամբ յատկացուցին վրայ, ինչպէս .

خَاتَمٌ مِنْ ذَهَبٍ ԵՄԱՆՔՆ ԽԱՏՄ ԶԵԲ (մատանի ոսկեղէն)

ثَوْبٌ مِنْ قَطْنٍ ԵՄԱՆԿԵՐԸ ԲԱՄՐԱԿԵԱՅ (հանդերձ բամբակեայ)

Գ. الاضافة الظرفية սակաւ ուրէք (ներգոյական կապակցութիւն) այն է, յորում Բ նախդիրը կ'իմացուի զօրութեամբ յատկացուցին վրայ, ինչպէս .

ضَرِبَ الْيَوْمَ ԵՄԱՆՔՆ ԵՄԱՆ ԵՐՈՒՄ ԵՄԱՆ ԵՐԱԾ ԺԵԺՐ (այն օրուան եղած ծեծը)

53. Ծանօթութիւն Ա. — Յատկացեալը ոչ յօդ և ոչ ալ ԵՄԱՆՔՆ կ'առնու, ինչպէս .

كَلَامُ الْحُكَمَاءِ (խօսք իմաստնոց)

دَارُ الْأَخِرَةِ (հանդերձեալն)

دَارُ السَّلَامِ (դրախտ) —

نَجْمُ السَّمَاءِ (աստեղք երկնից) .

54. Ծանօթութիւն Բ. — Երկուական և կանոնաւոր յոդնական յատկացեալներուն Ն երբ կը զեղչուին, զորօր .

Երկուսական

- Ո. غلاما زيد երկուքին ծառայքն Ձէյտի
- Ս. غلامى زيد երկուցունց ծառայիցն Ձէյտի
- Հ. غلامى زيد զերկուսին ծառայան Ձէյտի .

Կանոնաւոր յոգնական

- Ո. ساكنوا البلد բնակիչք քաղաքին
- Ս. ساكنى البلد բնակչաց քաղաքին
- Հ. ساكنى البلد զբնակիչս քաղաքին .

Աստնք պիտի ըլլային غلامان زيد , غلامين زيد եւ ساكنون البلد و ساكنين البلد و ساكنين البلد ըստ նախնական ձևոց որովք սակայն չէ բնաւ ներքելի վարել :

Այսպէս է նաև بنو آدم (որդիք Ադամայ) , بنى آدم , փոխանակ ըսուելու بنون آدم , بنين آدم :

Ծանօթութիւն Գ. — Եթէ յատկացուցիչը որոշեալ ըլլայ , կ'որոշէ (تعريف) զյատկացեալը , ինչպէս .

اسد الغاية (սրինդն Դաւթի) : حمى داود (առիւծ անտառին) .

Իսկ եթէ յատկացուցիչն որ ե իցէ անձ մը կամ իր մը ցուցնէ , կը մասնաւորէ (تخصيص) զյատկացեալը , ինչպէս .

خضيف جبل (ստորոտ լեռին) . غلام امرأة (ծառայ կնոջ) .

Ահաւասիկ մի քանի օրինակ վարժութեան համար :

حكمة الله իմաստութիւնն , սքանչելիքն Աստուծոյ
 بيضة فضة հաւկիթ արծաթոյ , արծաթեայ
 جين الماء ջրոյն արծաթը , ջուր արծաթեայ , յստակ ջուր

- أَدْخَلْتُ خَاتَمِي فِي أُصْبُعِي { Մատանիս դրի մատս ։
- صُدُورُ الْأَحْرَارِ قُبُورُ الْأَسْرَارِ { Ազնուականաց սիրտերը գաղտնեաց կամ աւանդից պահարաններն են ։
- رَأْسُ الْحِكْمَةِ مَخَافَةُ اللَّهِ { Գլուխ իմաստութեան երկիւզ Աստուծոյ (է) ։
- بَدَأُ الْحِكْمَةَ مَخَافَةُ الرَّبِّ { Սկիզբն իմաստութեան երկիւզ Տեառըն (է) ։
- كَلَامُ الْمَلُوكِ مُلُوكُ الْكَلَامِ { Խօսք թագաւորաց թագաւորք խօսից են
- مِنْ عَادَاتِ السَّادَاتِ عَادَاتُ الْعَادَاتِ { Մեծամեծաց սովորութիւնք սովորութիւնք մեծամեծաց (են) ։
- كُلُّ عِلْمٍ لَيْسَ فِي الْقِرطَاسِ ضَاعَ { Ամէն գիտութիւն որ ի գիր առնուած է, կը կորսուի ։
- كُلُّ سِرٍّ جَاوَزَ الْإِثْنَيْنِ شَاعَ { Ամէն գաղտնիք որ երկուքէն կանցնի կը տարածի*
- هَدِيَّةُ الرَّاعِي صَنِيعُ الصَّوْبِرِ { Ընծայ հովուին խէժ սոճույ ։
- الْحَمْرُ وَصَبَاحُ الشُّرُورِ وَمِفْتَاحُ الشُّرُورِ { Գինի է կանթեղ խրախուրթեան և բանալի չարեաց ։

55. Երբեմն յատկացեալն և յատկացուցիչը բարդ բառից կարգը կ'անցնին, ինչպէս .

- ضَرْبُ الْمَثَلِ առած , ضُرُوبُ الْأَمْثَالِ առածք
- دَارُ الْفُؤُونِ արուեստանոց
- شَيْخُ الْإِسْلَامِ երիցապետ Մահմետականաց
- دَارُ الْمُعَلِّمِينَ վարժապետանոց
- دَارُ الْمُعَلِّمَاتِ դպրոց վարժուհեաց
- شَاكِرُ النِّعْمَةِ երախտագէտ
- مُقِرُّ النِّعْمَةِ բարիքը խոստովանող .

* Այս տեղս երկուք ըսելով երկու շուրթն կիմացուի որ է ըբրան ։

ՅՕԴՈՒԱԾ Է.

Յ Ա Ղ Ա Գ Ս Ա Շ Ա Կ Ա Ն Ա Յ

56. Արարերէնի մէջ ածականը, թէ որոշեալ ըլլայ
և թէ անորոշ, միշտ գոյականէն ետքը կը գրուի և անոր
որպիսութիւնը կը յայտնէ, ինչպէս.

رَجُلٌ عَالِمٌ	այր գիտուն
جَبَلٌ شَاهِقٌ	լեռուն բարձր
تَعَمَّ الْأَنْبِيَاءُ الْكِتَابَ التَّفْسِيرُ	զի՞ բարի ընկեր է մատեան ընտիր
جَاءَنِي رَجُلٌ عَالِمٌ	այր ոմն գիտուն եկն առ իս
جَاءَتْنِي امْرَأَةٌ صَالِحَةٌ	կին ոմն բարեպաշտօն եկն առ իս

Կրկնութիւն ածականաց

جَاءَ كَمَا الرَّجُلُ الْعَالِمُ الْفَاضِلُ այրն գիտուն, առաքինի եկն առ ձեզ

57. Ածականը իր գոյականին հետ կը համաձայնի ութ
գէպքի մէջ. այսինքն՝ Ա. Հոլովի . Բ. Որոշեալի . Գ. Անորոշի .
Դ. Եզականի . Ե. Երկուականի . Զ. Յոգնականի .
Է. Արականի . Ը. Իգականի պարագայից մէջ :

Դիտողութիւն. — Ըստ ինքեան գոյական կամ ածա-
կան չըլլար, այլ բառ մը ուրիշ բառի մը քով գալով,
կ'իմացուի իրենց վիճակը կամ միտքը . վասն զի թէպէտև
موصوف (գոյական) և صفة (ածական) ըսել սովորութիւն
եղած է. սակայն موصوف ածական ունեցող, ածական ա-
ռած ըսել է. ուստի բառի մը առանձին ոչ գոյական և
ոչ ածական ըլլալը կրնանք վճռել, զորօրինակ .

Որոշեալ դոյական և ածական

Եղական արական	أَخْلَقُ الْحَسَنُ	բարբ(ն) դեղեցիկ
» իգական	أَخْلَقَتُ الْحَسَنَةَ	
Յոգնական	أَخْلَاقُ الْحَسَنَةِ	

Եղական արական	أَخْلَقُ السَّيِّئُ	բարբ(ն) յոռի
» իգական	أَخْلَقَتُ السَّيِّئَةَ	
Յոգնական	أَخْلَاقُ السَّيِّئَةِ	

58. Բաց ի وَنٌ և بِنٌ վերջաւորեալ բայածականներէն՝ որ անձ կը ցուցնեն, դրեթէ ամէն յոգնական, թէ կանոնաւոր և թէ անկանոն, իգական սեռէ է ըստ քերականական առածին թէ (كُلُّ جَمْعٍ مُؤَنَّثٌ) ամէն յոգնական իգական է :

Անորոշ դոյական և ածական

Եղական արական	خُلِقَ حَسَنٌ	բարբ դեղեցիկ
» իգական	خُلِقَتُ حَسَنَةً	
Յոգնական	أَخْلَاقٌ حَسَنَةٌ	

59. Եւանօթութիւն. — Որոշեալ անունները կ'ունենան վերջերնին մէկ فتحه և մէկ كسره և մէկ ضمه . իսկ անորոշներն ասոնց իւրաքանչիւրէն երկերկու, ինչպէս տեսնուեցաւ վերադոյն : (Տես հատուած 42 և այլն) :

Կը դնենք աստանոր մէկ քանի օրինակ ևս, վարժութեան համար :

* Քիչ սովորական է ըսել متقاعدين قديمة (վաղիմի հանգստաւորներ) . փոխանակ ըսելու متقاعدين قديمين :

Արոչեալ գոյական և ածական

الرَّجُلُ الْكَايِلُ	այր (ն) կատարեալ .
الرِّجَالُ الْكَايِمَةُ	արք (ն) կատարեալք .
الْبَيْتُ الْوَاسِعُ	տուն (ն) ընդարձակ .
الْبَيْتُ الْوَاسِعَةُ	տունք (ն) ընդարձակք .

Անորոշ գոյական և ածական

رَجُلٌ كَامِلٌ	այր (ոմն) կատարեալ .
رِجَالٌ كَامِلَةٌ	արք (ոմանք) կատարեալք .
بَيْتٌ وَاسِعٌ	տուն (մի) ընդարձակ .
بَيْتٌ وَاسِعَةٌ	տունք ընդարձակք .

60. Անձն կամ իր ցուցնող յոգնական գոյականի մը ածականը կը գրուի եղական իգական. ինչպէս որ տեսնուեցաւ վերի օրինակին մէջ երբեմն կանոնաւոր և կամ անկանոն յոգնական . իսկ երկուական գոյականին ածականն երկուական կը գրուի միշտ, ինչպէս .

Կանոնաւոր անձնական արական

Եղ .	المَصْفُ الشُّهُورُ	Մատենագիր (ն) համբաւաւոր
Երկ .	المَصْفَانِ الشُّهُورَانِ	Մատենագիրքն համբաւաւորք երկոքին
